



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՎԵՖԵՐՈՐԴ ՕՐ ԾԱՆՈՒԵԱՆ ՊԱՀՈՅ

04 ՅՈՒՆԻՈՒՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Ս. Մենդեան պատգամ	Էջ 1
Ուսուցում երգումի մասին	Էջ 3
Ուսուցում վրէժի մասին	Էջ 4
Թշնամիները սիրել	Էջ 6
Մանուցում	Էջ 8

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԱՅԵՑԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(13.10-16)

Մենք ունինք սեղան մը, որուն վրայ մատուցուած գոհէն ճաշակելու իրաւունք չունին հին սրբարանին ծառայող քահանաները: Արդարեւ, այն անասունները, որոնց արիւնը քահանայապետին ձեռքով սրբարան կը տարուէր՝ իբրեւ մեղքի համար մատուցուած գոհ, անոնց մարմինները բնակութեան վայրէն դուրս տեղ մը կ'այրուէին: Ընդհանրապէս պատճառով՝ Յիսուս ինք ալ քաղաքէն դուրս տարուելով չարչարուեցաւ, որպէսզի իր արիւնով սրբէ ժողովուրդին մեղքերը: Արդ, եկէք մենք ալ մեր բնակութեան վայրերէն դուրս գանք եւ իրեն երթանք, մեր վրայ առնելով իր կրած նախատինքները, որովհետեւ հոս՝ այս աշխարհի մէջ մնալուն քաղաք մը չունինք, այլ՝ գալիք երկնաւոր քաղաքին է որ կը ցանկանք: Հետեւաբար, մենք Քրիստոսի միջոցաւ տեւականօրէն օրհնեցողութիւն մատուցանենք Աստուծոյ՝ իբրեւ գոհ, այսինքն՝ մեր շրթները թող իր անունը դաւանին, իբրեւ լաւագոյն նուէր մեր կողմէ: Եւ մի՛ մոռնաք բարեգործութիւն ընել եւ օգնել ուրիշներուն, որովհետեւ ատոնք են Աստուծոյ կամեցած գոհերը:

մեր շրթները
թող իր
անունը
դաւանին,
իբրեւ
լաւագոյն
նուէր
մեր
կողմէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(21.34-38)

- Գալով ձեզի, ուշադի՛ր եղէք ձեր անձերուն: Չըլլայ որ ձեր սիրտերը գրաւուին կերուխումով, արբեցութեամբ եւ աշխարհիկ հոգերով, եւ յանկարծ այդ օրը ձեր վրայ գայ: Որովհետեւ այդ օրը պիտի գայ ծուղակի պէս՝ բոլոր մարդոց, որոնք ամբողջ աշխարհի վրայ կ'ապրին: Ուստի արթուն եղէք եւ միշտ աղօթեցէք, որ արժանի ըլլաք այս պատահելիքներէն ազատելու եւ Մարդու Որդիին ներկայութեան կանգնելու:

արթուն
եղէք եւ
միշտ
աղօթեցէք

Յիսուս ամբողջ օրը տաճարին մէջ կ'ուսուցանէր, իսկ երեկոյեան կ'երթար Ձիթենաց կոչուած լեռը՝ գիշերելու: Առաւօտ կանուխ ամբողջ ժողովուրդը տաճար կ'երթար զինք լսելու համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ
ՔՐԻՍՏՈՍ՝ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՅ
ՄԱՐՄՆԱՅՈՒՄԸ

«Ո՛չ թէ մենք սիրեցինք զԱստուած, այլ Աստուած Ի՛նք սիրեց մեզ եւ իր Որդին դրկեց...»
(Ա. ՅՆ 4. 10):

Յովհաննէս Առաքեալին նամակէն պոկուած այս փունջ մը բառերուն մէջ խտացած է քրիստոնէական հաւատքին էութիւնը, անոր իւրայատկութիւնը: Քրիստոնէական կրօնին առնչուած որեւէ ճշմարտութիւն եւ սկզբունք, ըմբռնում եւ աւանդութիւն խարսխուած է այս անհրճելի իրողութեան վրայ:
«Աստուած Ի՛նք սիրեց մեզ», եւ որպէս սիրոյ արտայայտութիւն տիեզերքը ստեղծեց:

«Աստուած Ի՛նք սիրեց մեզ», եւ որպէս սիրոյ նշան մարդը ստեղծեց ու իրեն գործակից նշանակեց:

«Աստուած Ի՛նք սիրեց մեզ», եւ այնքա՛ն սիրեց որ հակառակ մարդու մեղքին իր Միածին Որդին զրկեց աշխարհ:

**Աստուած
սէրն իսկ է՝
իր էութեամբ
ու գործով:**

Ահա կորիզը քրիստոնէական հաւատքին:

Անսահման, անբացատրելի ու աներեւակայելի է սէրը Աստուծոյ: Մէրը ո՛չ միայն Աստուծոյ ստորոգելիներէն մէկն է, եւ գլխաւորը, այլ

Աստուած սէրն իսկ է՝ իր էութեամբ ու գործով: Աստուծոյ յայտնութեան բոլոր կերպերուն մէջ, սէրը տիրական է: Աստուծոյ սիրոյ հասցէն մա՛րդն է: Աստուածաշունչը մարդուն նկատմամբ Աստուծոյ ունեցած հայրական սիրոյն կենդանի պատմութիւնն է: Աշխարհի մէջ ո՛չ մէկ կրօնք, հին թէ՛ նոր, աստուածային յայտնութիւնը կ'ըմբռնէ գերազանցօրէն որպէս սիրոյ արտայայտութիւն, եւ Աստուած-մարդ յարաբերութիւնը կ'արժեւորէ ա՛յս տեսանկիւնէն:

Բեթղեհէմը պերճախօս վկայութիւն մըն է՝ մեղաւոր մարդուն նկատմամբ Աստուծոյ ունեցած անհուն սիրոյն:

Բեթղեհէմը սիրոյ կամուրջ մըն է՝ երկինքէն երկիր նետուած:

Բեթղեհէմը աստուածային սիրոյ մշտահոս աղբիւր մըն է՝ մարդոց մեղքով քարացած սրտերը հոսող:

Բեթղեհէմը աստուածային սիրոյ հրաւէր մըն է՝ ուղղուած բոլոր ժամանակներու ու բոլոր ազգերու պատկանող մարդոց:

Բեթղեհէմի ճամբով աշխարհին յայտնուած սէրը համամարդկային է ու համատիեզերական: Ան ինքնընծայում է ու խոնարհութեան ճամբով ծառայութիւն: Այդ սէրն է որ կը յաղթէ չարին, կը մաքրէ մեղքը ու մարդուն մէջ կը կերտէ վաւերական մարդը: Այնքան զօրեղ է սէրը Բեթղեհէմեան, որ նո՛յնիսկ զԱստուած կը մղէ մարդանալու՝ սիրոյ նո՛յն ուժով մարդը բարձրացնելու դէպի Աստուած:

Քրիստոսի ճամբով Աստուած մեզի հետ եղաւ, որովհետեւ սիրեց մեզ. Աւետարանի բառերով՝ «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ...» (ՅՃ 3. 16): Աստուած մի՛շտ մեզի հետ է, որովհետեւ մի՛շտ կը սիրէ մարդը, իր ստեղծագործութեան պսակը: Բեթղեհէմը սոսկ անցեալ չէ՛, այլ շարունակուող սիրոյ խորհուրդ է ու միաժամանակ պատգամ: Հարկ է մասնակից դառնալ Բեթղեհէմեան խորհուրդին՝ հասկնալու համար անկէ եկող պատգամը յաւերժական:

Բեթղեհէմէն ճառագայթող երկնային սիրոյ դիմաց մենք ի՞նչ կ'ընենք: Կ'ընդունի՞նք աստուածային սէրը մեր մէջ. կ'ընդառաջե՞նք

սիրոյ հրամայականին: Այլ խօսքով՝

- Որքանո՞վ մօտ եմք Աստուծոյ: Աստուծոյ ճանաչումը մարդուն բանականութեան արդիւնքը չէ, Աստուած ի՛նք մօտեցաւ մարդուն: Աստուած միշտ կը մօտենայ մեզի. արդեօք մենք մօ՞տ ենք Աստուծոյ՝ մեր կեանքի որակով ու ոճով, մեր մտածումներով ու գործերով: Առաքեալը կը յորդորէ. «մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Աստուած ինք պիտի մօտենայ ձեզի» (Յկ 4. 8): Չմոռնանք երբեք, որ առանց Աստուծոյ ներկայութեան, մարդուն կեանքը պիտի կորսնցնէ իր իմաստը, իր նպատակը ու գոյութեան պատճառը: Մարդ ո՛չ միայն աստուածաստեղծ արարած է, այլ նաեւ կոչուած է դառնալու աստուածակերպ արարած: Աստուծմէ՛ հեռու մնալ կը նշանակէ դաւաճանել մեր կոչումին: Իսկ Աստուծոյ մօտ ըլլալու համար, Աստուծոյ ներկայութիւնը ապրելու համար, պէտք է սիրել զԱստուած. «Ով որ չի սիրեր՝ զԱստուած չի հանչնար, որովհետեւ Աստուած սէր է» (Ա. ՅՃ 4. 8):

- Որքանո՞վ կը սիրեմք զԱստուած: Մարդուն նկատմամբ ունեցած իր սիրոյ որպէս շօշափելի արտայայտութիւն, Աստուած մարդացաւ ու նոյնիսկ խաչ բարձրացաւ: Քրիստոս ըսաւ. «Ով որ կը սիրէ զիս՝ խօսեքս կը գործադրէ» (ՅՃ 14. 23): Արդ, չի՛ բաւեր միայն ըսել, թէ զԱստուած կը սիրենք. մեր սէրը պէտք է գործնապէս արտայայտենք՝ մեր կեանքը աստուածահաճոյ գործերով հարստացնելով, Աստուծոյ մեզի պարգեւած շնորհքը ու նիւթական առաւելութիւնը ուրիշներուն հետ բաժնելով, Աստուծոյ թագաւորութեան համար աշխատելով: Յիշենք Քրիստոսի սէրը ապրած Առաքեալին յորդորը. «Որդեակներ, մեր սէրը միայն խօսքով ու լեզուով թող չըլլայ, այլ՝ գործով արտայայտուած նշմարիտ սէր» (Ա. ՅՃ 3. 18):

- Որքանո՞վ կը սիրեմք մեր նմանը: Քրիստոսի պատուէրը յստակ է. «Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը գոհէ իր բարեկամներուն համար» (ՅՃ 15. 13): Մէրը կը մերժէ անձնակերպող կեանքը: Մէրը մեր ունեցածէն բաժին մը տալ չէ, նոյնիսկ ամբողջը տալ չէ, այլ մեր ա՛նձը տալ է: Աստուծոյ Որդին ինքզինք տուաւ մարդուն փրկութեան համար: Եթէ Քրիստոս իր կեանքը զոհեց մեզի համար, մենք եւս, նո՛յն օրինակով, մեր կեանքը ի սպաս պէտք է դնենք մեր նմանին համար՝ հիւանդին, աղքատին ու զրկեալին օգտակար հանդիսանալով. այլապէս մարդ «ինչպէս կրնայ ըսել՝ թէ Աստուծոյ սէրը ունի իր մէջ» (Ա. ՅՃ 3. 17):

- Որքանո՞վ կը զգանք թէ Աստուծոյ զաւակներն ենք: Քրիստոս Աստուծմէ՛ հեռացած մարդը ո՛չ միայն վերստին մօտեցուց իր Երկնաւոր Հօր, այլ նաեւ Աստուծոյ որդեգիր զաւակը դարձուց: Քրիստոս իր արիւնով մեզ գնեց, իր խաչով մեզ ազատագրեց մեղքի տիրապետութենէն: Մարդուն

կեանքը մարդակեղրոն արժէքներով լեցնող ներկայ աշխարհին մէջ, որքանո՞վ կ'անդրադառնանք մեր մեղքերուն ու կը փորձենք վերադառնալ մեր Երկնաւոր Հօր: Մեզ այս աշխարհի՛ն ենթակայ դարձնող ուժերուն դիմաց, որքանո՞վ կը մնանք հաւատարիմ Քրիստոսին՝ որ մեր առջեւ բացաւ սիրոյ ու յաւերժութեան ճամբան: Յիշենք Առաքեալին խօսքը. «Ով որ կ'ուզէ աշխարհին բարեկամ ըլլալ, ինքզինքն Աստուծոյ թշնամի կը դարձնէ» (ՅԿ 4. 4): Մարդ չի՛ կրնար երկու տէրերուն ծառայել. մեր Տէրը Աստուած է. մենք ենթակայ ու երախտապարտ ենք Աստուծոյ միայն:

- Որքանո՞վ վերանորոգած ենք մեր անձը: Աստուծոյ սէրը, իր Որդւոյն մարդեղացումով աշխարհին տրուած՝ նպատակ ունէր մարդուն փրկութիւնը, այլ խօսքով՝ մարդուն վերանորոգումը: Բեթղեհէմը սկիզբն է երկրորդ արարչութեան, մարդու ու տիեզերքի վերստեղծումին: Աստուծոյ ծնունդը մարդուն ու մարդու ճամբով աշխարհին վերածնունդը ըլլալու սահմանուած էր: Արդ, պատրա՞տ ենք վերանորոգելու մեր անձերը, նոր մարդ դառնալու՝ ի խնդիր Բեթղեհէմէն ճառագայթող վերստին ծնունդի ու սիրով շողախուած նոր կեանքի: Պատրա՞տ ենք ընդունելու Աստուծոյ սիրոյ պարգեւը մեզմէ իւրաքանչիւրին մատուցուած Յիսուս Քրիստոսի ճամբով, եւ զայն կեանքի՛ վերածելու մեր անհատական, ընտանեկան թէ՛ հաւաքական կեանքին մէջ:

Այս հարցադրումները պէտք է իւրաքանչիւր քրիստոնեայ կատարէ իր անձին...:

Աստուծոյ Որդւոյն ծնունդը տօնել կը նշանակէ մեր հաւատքը ինքնաքննութեան ենթարկել, մեր ինքնութիւնը բերեղացնել ու մեր կոչումը վերարժեւորել:

Եթէ մոլորած ոչխարին նման կորսնցուցած ենք մեր կեանքի ճշմարիտ ճամբան, փնտռենք մեր քաջ Հովիւը՝ Քրիստոսը:

Եթէ Անառակ Որդիին պէս հոգեւոր արժէքներէն մեզ հեռացնող վայրերուն մէջ կը թափառինք, վերադառնանք Աստուծոյ տունը՝ մեր եկեղեցին:

Եթէ ապաւինած ենք նիւթեղէն աշխարհի բարիքներուն, մօտենանք Բեթղեհէմի Մանուկին՝ մեր կեանքի հօր ապաւէնին:

Եթէ խաւարի ու մեղքի մէջ կորսուած ենք, դառնանք Աստուծոյ մարդացեալ Որդւոյն՝ աշխարհի ճշմարիտ Լոյսին ու փրկութեան ձանապարհին:

Եկէք, սիրելի՛ հայորդիներ, լսենք՝ անցեալէն եկող բայց անցեալ չճանչցող սիրոյ յաւերժահունչ պատգամը Բեթղեհէմին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
6 Յունուար 2009
Անթիլիաս, Լիբանան:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

Ե ԳԼՈՒԽ

ՈՒՆՈՒՅՈՒՄ ԵՐԳՈՒՄԻ ԱՆՍԵՆ:

«Լսեր էք նաեւ որ անցեալին ըսուած է.՝ Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ երդուած է իր Տիրոջ:

Իսկ ես կ'ըսեմ՝ ձեզի.՝ Բնաւ երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որովհետեւ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որովհետեւ անոր ոտքին պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ փառքն է: Եւ ո՛չ ալ գլխուդ վրայ երդում ըրէ, որովհետեւ էս կրնար մագ մը իսկ ներմկցնել կամ սեւցնել: Պարգապէս ձեր Այոն՝ Այո թող ըլլայ եւ Ոչը՝ Ոչ: Անկէ աւելին չարէն կու գայ» (33-37):

Անցեալին ըսուածը՝ Հին Կտակարանին մէջ ո՞ւր կը գտնենք: Թուոց 30.2-ին մէջ կը կարդանք. «Տիրոջ պատուիրածը այս է. Եթէ մարդ մը Տիրոջ ուխտ ընէ կամ երդում ընելով իր անձը կապելու ըլլայ, իր խօսքը պարապ թող չհանէ, բոլոր իր բերնէն ելածին պէս թող ընէ»: Այստեղ երկու տարբեր բառեր կը գործածուին. ուխտ եւ երդում: Ուխտը եւ երդումը տարբե՞ր բաներ են:

Ի՞նչ կը նշանակէ ուխտ բառը:

Դաշինքէն եւ համաձայնութենէն զատ, նաեւ՝ խոստում կը նշանակէ:

Օրինակ՝ Աստուած Աբրահամին ուխտեց, որ զաւակ մը պիտի տայ: Այս ուխտը խոստում է: Իսկ խոստումը եւ երդումը տարբե՞ր են իրարմէ:

Ե՛ւ այո, եւ ոչ:

Սաղմոս 132.11-ը կ'ըսէ. «Տէրը ճշմարիտ եւ անդառնալի երդում ըրաւ Դաւիթին, ըսելով.՝ Քու ուրդիներէդ մէկը պիտի նստեցնեմ քու աթոռիդ»: Այստեղ ըսուած երդումը՝ խոստում է: Բայց ամէն երդում խոստում չէ: Երդումի երկու տեսակ կայ. երդում կայ, որ դրական խոստում է. եւ երդում կայ, որ ժխտական կամ ոչ-իրաւ յանձնառութիւն է: Թուոց գիրքէն մէջ բերեալով Աստուած կը պատուիրէ կատարուած երդումը «պարապ չհանել»: Անգամ մը որ երդումը ելաւ բերնէդ, այլեւս պէտք է կատարես զայն. քանի որ դուն քեզ յանձնառութեան մը մէջ դրիր, ուրեմն պարտաւոր ես ըսածդ կատարել:

Բ. Օր 23.21-23 համարները կ'ըսեն. «Երբ քու Տէր Աստուծոյդ ուխտ մը ընես, առանց ուշացնելու կատարէ, քանզի քու

Տէր Աստուածդ անպատճառ գանիկա քեզմէ պիտի պահանջէ ու մեղքի տէր պիտի ըլլաս: Բայց եթէ ուխտ ընել չուզես, այն քեզի մեղք չըլլար: Ինչ որ բերնովդ կը խոստանաս ու քու կամքովդ քու Տէր Աստուծոյդ կ'ուխտես, քու շրթունքներէդ ելածը զգուշութեամբ կատարէ՛»:

Այս մէջբերումով յստակ կը դառնայ թէ՛ Աստուած մեզմէ ուխտ չ'ուզեր, ո՛չ ալ խոստում կամ երդում: Բայց անգամ մը որ կատարեցիր, արդէն պարտական ես: Եթէ չգործադրես ըսածդ՝ մեղաւոր ես Աստուծոյ առջեւ եւ յանցաւոր ես մարդոց դիմաց:

Հիմա ճամբայ ելլենք գտնելու համար, թէ ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս:

Իմաստութիւնը կը պահանջէ, որ դուն քեզ ո՛չ մարդոց դիմաց յանցաւոր դարձնես եւ ոչ ալ Աստուծոյ առջեւ՝ մեղաւոր: Նախապէս ըսած էր, թէ երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ՝ դատարան չի նկատ: Այսինքն՝ ըսել ուզած էր, որ իմաստութիւն մը ի գործ դիր: Նոյնպէս իմաստութիւն է սկիզբէն երդում չընել, երբ պիտի չկատարես ըսածդ: Այլապէս մարդոց հետ յարաբերութիւնդ լաւ չ'ըլլար, եւ հետեւաբար Աստուծոյ հետ յարաբերութիւնդ ալ դժուարութիւն մը կ'ունենայ:

Երբ Յիսուս կ'ըսէ. «Բնաւ երդում մի՛ ընէք», հրահանգ մը չէ, որ կուտայ: Յիսուս չ'արգիլեր երդում ընելը, այլ պարզապէս երդումին լրջութեան կ'ուզէ գիտակից դարձնել զայն կատարողը: Երդում ընողը յանցաւոր կամ մեղաւոր չէ: Հին Կտակարանին մէջ առաջին երդում ընողը Աստուած ինքն է: Սակայն Աստուած իր խօսքին տէրն է. Աստուծոյ խօսքը բացարձակապէս վստահելի է: Նկատի ունենալով, որ մարդկային կեանքին մէջ բազմաթիւ պատճառներ կամ փորձութիւններ կան երդումէ մը հրաժարելու՝ Յիսուս կը զգուշացնէ:

Յիսուսի ժամանակ երդումի մասին ռաբբիական թիւր մեկնութիւն մը կար, որ ժողովուրդը սուտ երդումի կը վարժեցնէր: Ըստ այդ մեկնութեան, երդում կայ որուն չկատարուելուն պարագային Աստուած մեղք չի գրեր, երդում կայ՝ որուն չկատարուելու պարագային Աստուած մեղք կը գրէ: Մատթէոսի աւետարանին 23-րդ գլխուն մէջ կը կարդանք Օրէնքի ուսուցիչներուն ուղղուած Յիսուսի հետեւեալ խօսքը. «Վա՛յ ձեզի, կո՛յր առաջնորդներ: Կ'ըսէք.՝ Ան որ տաճարին վրայ կ'երդնու՛, երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ տաճարին ոսկիին վրայ կ'երդնու՛, պարտաւոր է կատարելու: Յիմարնե՛ր,

կոյրեր, ո՞ր մէկը կարեւոր է, ոսկի՞ն թէ տաճարը, որ կը սրբագործէ ոսկին» (Համարներ 16-17): Աճապարեմ ըսելու, որ Յիսուսի այս խօսքը չի նշանակեր, թէ ըստ իրեն տաճարին վրայ պէտք է երդում ընել եւ ոչ թէ ոսկիին: Ո՛չ: Ըսել կ'ուզէ, թէ երդումի մասին տրուած մեկնութիւնը սուտ է:

Յիսուսի պատուէրն է. Փոխանակ երդում ընելու՝ վստահելի խօսք ըսել: Ինչպէս Աստուծոյ խօսքը վստահելի է, նոյնպէս Աստուծոյ հետեւող մարդուն խօսքը վստահելի պէտք է ըլլայ:

ՈՒՄՈՒԹՈՒՄ ՎՐԵԾԻ ԱՃԱԲԱ:

«Լսեր էք որ ըսուած է.՝ Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակռայի դէմ՝ ակռայ»:

Իսկ ես կ'ըսեմ ձեզի.՝ Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթէ մէկը աչք քեզիդ պատակ գարնէ՛, միւս քեզիդ ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բանկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բաց մը խնդրէ՛, տուր, եւ եթէ մէկը քեզմէ բաց մը փոխ առնել ուզէ՛, երես մի՛ դարձնեք» (38-42):

«Աչքի դէմ աչք, ակռայի դէմ ակռայ» ուսուցումին կը հանդիպինք Եւքի գիրքին մէջ (21.24): Նաեւ՝ Ղեւտացիներու գիրքին (24.20): Արդեօք ասիկա վրէժխնդրութի՞ւն կը սորվեցնէ: Ո՛չ: Այլ՝ փոխարէնը հատուցում:

Յիսուսի ժամանակ Մովսիսական այս ուսուցումը եւս սխալ բացատրուած էր: Ռաբբիական մեկնութիւնը խօսքը իր շրջագիծէն, իր ընդհանուր մթնոլորտէն կտրած կամ անջատած էր, եւ զայն բացատրած ինքն իր մէջ՝ իբր վրէժխնդրութեան ուսուցում մը: Մինչդեռ մարգարէին կողմէ տրուածը վրէժխնդրութեան հետ կապ չունէր: Հետեւաբար, Յիսուսի ըսածը սրբագրութիւն մըն է ո՛չ թէ մարգարէի ուսուցումին, այլ անոր տրուած ռաբբիական մեկնութեան:

Հին Կտակարանի ուսուցումը ուզած է, որ մարդը իր անձնական նախաձեռնութեամբ կամ մղումով չփորձէ վրէժխնդիր ըլլալ: Աստուծոյ գործն է արդարութիւն ընելը: Ղեւտացիներու գիրքին մէջ կը կարդանք. «Վրէժ մի՛ առնեք եւ քու ժողովուրդիդ որդիներուն դէմ ո՞ր մի՛ պահեր, հապա քու ընկերդ քու անձիդ պէս սիրէ՛: Ես եմ Տէրը» (19.18): Այս «Ես եմ Տէրը» հաստատումը ըսելու համար է, թէ արդարութիւն ընելը

Ինչպէս
Աստուծոյ
խօսքը
վստահելի
է, նոյնպէս
Աստուծոյ
հետեւող
մարդուն
խօսքը
վստահելի
պէտք է
ըլլայ:

Աստուծոյ գործն է, եւ ոչ թէ մարդունը:

Յիսուս երբ կ'ըսէ. «Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին», իրականութեան մէջ նոր բան մը չէ, որ կը սորվեցնէ, այլ Հին Կտակարանի ուսուցումը կը պարզաբանէ:

Հին Կտակարանի այդ ուսուցումը կ'ուզէր անհատական վրէժխնդրութիւնը արգելելով՝ չարիքը սահմանափակել եւ ընկերութեան մէջ կարգ ու կանոն ստեղծել: Ինչպէս այսօր պետական օրէնքները չարիքները կը սահմանափակեն կամ կը ծառայեն չարիքները սահմանափակելու, նոյնն է պարագան աստուածատուր օրէնքներուն: Պօղոս առաքեալ ըսած է, թէ օրէնքը կայ կամ ի գօրու է այնտեղ՝ ուր օրինազանցութիւն կայ (Հմմտ Հռ 4.15): Հետեւաբար, օրէնքները կան օրինազանցութիւնները սահմանափակելու համար:

Դարձեալ, երբ Յիսուս կ'ըսէ. «Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին», ի՞նչ ըսել կ'ուզէ:

Երկու պարզաբանում:

Առաջին. ասիկա անհատական հոգեւոր կեանքին վերաբերող ուսուցում մըն է եւ ոչ թէ՛ ազգային-քաղաքական կեանքին: Այս գանձանակումը շատ կարեւոր է, որպէսզի մենք ճիշդ հասկնանք Յիսուսի ըսել ուզածը:

Երկրորդ. ոմանք կը կարծեն, որ ասիկա տկարութիւն կը սորվեցնէ, եւ թէ՛ այն օրէն որ մեր ժողովուրդը քրիստոնեայ դարձաւ, այլեւս տկարացաւ, եւ չկրցաւ մեր երկիրը պաշտպանել: Մինչդեռ պատմական ճշմարտութիւնը ճիշդ հակառակն է: Նախաքրիստոնէական շրջանին բացի երկու երեք դէմքերով ստեղծուած անկախութենէն՝ մենք միշտ ենթակայ եղած ենք օտարին, իսկ քրիստոնէական շրջանին թագաւորութիւններ ունեցանք, թէպէտ այդ ժամանակներուն ալ՝ դժբախտութիւններ մեր գլխուն եկան: Անոնք որ կը պնդեն, թէ քրիստոնէական վարդապետութիւնը տկարացուց մեզ, կը շարունակեն իրենց առարկութիւնը եւ կը յիշեցնեն Գեթսեմանիի պարտէզին մէջ Պետրոսի ուղղած Յիսուսի սաստը թէ՛ «Սուրբ տեղը դիր, որովհետեւ ո՛վ որ սուր կ'առնէ՛ սուրով պիտի մեռնի» (Մտ 26.52): Սակայն այս առարկութիւնը ընողները չեն հասկնար, որ սուրով՝ արդարութիւն մը չի վերահաստատուիր: Թէ՛ անհատական գետնի վրայ եւ թէ՛ ազգային գետնի վրայ սուրով արդարութիւն չի ստեղծուիր: Հարցը ինքնապաշտպանութեան մասին չէ: Ինքնապաշտպանութիւնը չարիքը սահմանափակելու համար է: Եւ ինչ որ չարիքը կը սահմանափակէ՝ թոյլատրելի է: Յիսուսի

խօսքը կը վերաբերի վրէժխնդրական հակազդեցութեան: Վրէժխնդրական հակազդեցութիւնը արդարութիւն չ'ըներ, այլ վէրքին դիմաց վէրք մը կը ստեղծէ: Ինչպէս ուրիշին վրէժխնդրական արարքը՝ իմ վրէժխնդրութիւնը կը շարժէ, իմ վրէժխնդրական արարքն ալ՝ ուրիշին վրէժխնդրութիւնը կը շարժէ: Եւ հետեւաբար, վրէժխնդրական շղթան կ'երկարի ու կրնայ ընդարձակուիլ. յիշենք Յովհաննէս Թումանեանի «Կաթիլ մի մեղր»ը:

Վրէժխնդրական հակազդեցութիւնը արդարութիւն չ'ըներ, այլ վէրքին դիմաց վէրք մը կը ստեղծէ:

Չարիքին չարիքով պէտք է հակազդել:

Չարիքին չարիքով պէտք է հակազդել:

Երբ մէկը չարիք կ'ընէ, յստակ կը դարձնէ, որ ինք բարիին գիտութիւնը եւ գօրութիւնը չունի: Մինչդեռ այն մարդը որ հոգեւոր դաստիարակութեան խորունկ մակարդակին հասած է, իսկական բարութեան գիտակցութիւնը ունի: Անոր կեցուածքը ուրիշ-ներուն վարմունքով չէ որ կը պայմանաւորուի: Ան չ'ուզեր իր ներքին լոյսը խաւարի վերածել կամ իր ներքին պայծառութիւնը չ'ուզեր մթազնել: Անոր արարքները կ'արտացոլացնեն իր հարազատ էութիւնը, բարութեան ճանաչումը:

«Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին» խօսքէն ետք, չորս մակարդակներով կը ներկայացնէ հարցը:

Առաջին մակարդակը կրնանք կոչել «անհատական»: Երկրորդը՝ «դատարանական»: Երրորդը՝ «պետական»: Չորրորդը՝ «բարեգործութեան»:

Անհատական մակարդակը. «Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՛ միւս երեսդ ալ դարձուր անոր»: Ըսել կ'ուզէ, որ որեւէ ձեւով բիրտ արարքին մի՛ հակադարձեր:

Դատարանական մակարդակը. «Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի կանչել՝ շապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ տուր անոր»: Այստեղ սեփական իրաւունքէն զիջելու մասին կը խօսի Յիսուս:

Անցեալին՝ երբայցի ժողովուրդի կեանքին մէջ Օրէնքի ուսուցիչները կային, որոնք օրէնքները իրենց ուզած ձեւին կը դարձնէին՝ որպէսզի կացութիւն մը կամ պարագայ մը արդարացնեն կամ դատապարտեն:

Ներկայիս ալ օրէնքներուն ճարպիկ մեկնաբանութեամբ փաստաբաններ կացութիւն մը կամ պարագայ մը արդարանալի կամ դատապարտելի կրնան դարձնել: Հագուազէպ

կը պատահի որ ճշմարտութիւնը երեւան գայ եւ իսկական արդարութիւն ըլլայ: Ներկայիս աշխարհի դատարանները դրուածիւն մը ստեղծած են, որ խախուտ է: Երբ փաստաբան մը ճարպիկ է, կրնայ իր յաճախորդը պաշտպանել այնպէս, որ իրաւունքին մէջ եղողը՝ ճարպիկ փաստաբան մը չունենալուն պատճառով՝ կորսնցնէ դատը:

Մարդկային դատարանը իսկական արդարութիւն չի կրնար ընել: Ասիկա ճշմարիտ էր թէ՛ անցեալին, եւ թէ՛ ալ ճշմարիտ է ներկայիս:

Արդ, որքան ալ որ մարդ խորապէս արդարութեան զգայարանքը ունենայ, նոյն ատեն պէտք է ճանչնայ նաեւ՝ ար-տաքին աշխարհին իրականութիւնը: Եւ խոհմաբար կամ իմաստութեամբ իր իրաւունքէն յաւելեալ զիջում մը ընէ, եւ ինքզինք ազատէ գալիք չարիքէն: Բայց միաժամանակ ունենայ այն վստահութիւնը, թէ ինչ որ այս աշխարհի դատարանը չի կրնար ընել, Աստուած իր դատաստանով պիտի ընէ: Քրիստոնեային զիջումը կրաւորականութիւն մը չէ, այլ աստուածային արդարութեան վրայ վստահութիւն մը:

Պետական մակարդակը. «Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր հետ երկու մղոն ալ գնա»: Ի՞նչ է այս խօսքով ըսել ուզուածը: Ո՞վ է, որ կը բռնադատէ «մէկ մղոն միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար»:

Յիսուսի ժամանակակից պատմական տեղեկութիւններէն գիտենք, որ հռոմէացի զինուորները իրաւունքը ունէին որեւէ ատեն հպատակէ մը ծառայութիւն պահանջելու: Ասիկա անարդարութիւն էր: Բայց ի՞նչ պէտք է ընել անարդարութեան պարագային: Ընդդիմանա՞լ: Ո՞չ: Այլ համբերութեամբ տանիլ անարդարութեան բեռը: Եւ ոչ թէ միայն տանիլ, այլ նաեւ առաւել զոհողութիւն մըն ալ յանձն առնելու պատրաստ ըլլալ: Ու մնալ միշտ այն հաւատքով, թէ համբերութիւնը ի վերջոյ պիտի վարձատրուի: Բոլոր անարդարութիւններէն վերջ, Աստուած իր արդարութիւնը պիտի հաստատէ: Եւ անոնք որ արդարութեան քաղցն ու ծարաւը ունին՝ պիտի յագենան:

Բարեգործութեան մակարդակը. 42-րդ համարին մէջ կը կարդանք. «Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՝ տուր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ առնել ուզէ՝ երես մի՛ դարձնէր»: Հին Կտակարանին մէջ փոխատուութեան օրէնքը կայ: Արդեօք ատոր առնչութիւն ունի՞ խօսքը:

Բ. Օր 15.7-11-ին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուծոյդ քեզի տրուած երկրին մէջ, քու քաղաքներուդ մէկուն մէջ, եթէ եղբայրներէդ

մէկը աղքատ ըլլայ, խստասրտութիւն մի՛ ընէր ու աղքատ եղբորդ ձեռքդ մի՛ գոցեր: Հապա անպատճառ ձեռքդ բաց անոր, ու անոր կարօտութեանը բաւելու չափ տուր: Զգոյշ կեցի՛ր, չըլլայ թէ սրտիդ մէջէն չար խորհուրդ մը անցնես ու եօթներորդ տարին՝ շնորհելու տարին մօտ է մտածելով՝ աղքատ եղբորդ վրայ անգութ աչքով նայիս ու անոր փոխ չտաս եւ ան ալ քեզի դէմ Տիրոջ աղաղակէ եւ դուն մեղքի տէր ըլլաս: Անպատճառ անոր տուր ու անոր տալու ատենդ սիրտդ թող չնեղուի. վասնզի Տէր Աստուածդ այս պատճառով քու բոլոր գործերուդ ու ձեռնարկներուդ մէջ քեզ պիտի օրհնէ: Որովհետեւ երկրին մէջէն աղքատ պակաս պիտի չըլլայ, անոր համար քեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ՝ Քու երկրիդ մէջ եղած աղքատ ու չքաւոր եղբորդ ձեռքդ բաց ըլլայ»:

Հին Ուխտի աւանդութիւններէն մէկն էր «Թողութեան Տարի» կամ «Շնորհելու Տարի» կոչուածը: Եօթ տարին անգամ մը կ'ըլլար անիկա: Երբ այդ տարին գար՝ ինչ պարտքեր որ կային՝ պէտք է շնորհուէին: Եւ յաճախ կը պատահէր, որ ունեւորներ փոխ չտային աղքատներուն՝ եթէ յաջորդ տարին Թողութեան Տարի ըլլար:

Ուստի, օրէնքին բարեգործութիւնը պարտադրանք մըն էր: Պարտադրական բարեգործութիւն մը կարելի է բարեգործութիւն համարել:

Յիսուս իր պատուէրով բարեգործութիւնը կը դարձնէ կամաւոր սկզբունք մը եւ ո՛չ թէ՛ պարտադիր: Կամաւոր կերպով կատարուած բարեգործութիւնն է ճշմարիտ բարեգործութիւնը:

ԹՇՆԱԴԻՆԵՐՈՒ ՍԻՐԵԼ:

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է.- Սիրէ՛ ընկերդ եւ ստէ՛ քշնամիդ:

Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Սիրեցէ՛ք ձեր քշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր գաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարքերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անոնք կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն ձեզ սիրողները սիրէ՛ք, Աստուծմէ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել: Մաքաւորներն ալ նոյնը չե՞նք ընէր: Նմանապէս, եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէ՛ք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չե՞նք ընէր: Արդ, դուք կատարեալ եղէ՛ք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» (43-48):

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է.- Սիրէ՛ ընկերդ եւ ստէ՛ քշնամիդ»:

«Սիրէ՛ ընկերդ»: Այս պատուէրին աղբիւրն է Ղեւտացիներու գիրքի 19.18 համարը.

այնտեղ գրուած է. «քու ընկերդ քու անձիդ պէս սիրէ»:

«Ատէ՛ թշնամիդ» չկայ Աստուածաշունչին մէջ: Անիկա ժողովուրդին ստեղծած բանն է կամ ժողովրդական սխալ եզրայանգում մըն է: Երբ Յիսուս «ըսուած է» կ'ըսէ, Օրէնքէն չէ, որ կը մէջբերէ, այլ իր օրերուն տարածուած մտայնութիւն մը նկատի ունի: Եւ այդ մտայնութեան իր «դարման»ը կ'ուսուցանէ, ըսելով. «Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն»:

Առաջին հարցումը որ կը դրուի սա է. Կարելի՞ է թշնամիները սիրել:

Յիսուս իր հետեւորդներէն անկարելի՞ն կը պահանջէր:

Ո՛չ: Ան գիտէր որ երբ մարդ էակը կամենայ՝ կրնայ ընել: Ուստի, անկարելին չէ, որ կը պահանջէր:

Կը բաւէ, որ մարդը կամենայ. կամենալը՝ կարենալ է: Յիսուսի պատգամն է, թէ ան որ իրեն կը հետեւի՝ եթէ կամենայ՝ կրնայ թշնամի սիրել, անիծողը օրհնել, ատողին բարիք ընել եւ չարչարողին ու հալածողին համար՝ աղօթք:

Սովորութիւն է ըսել՝ «Աստուած կը սիրեմ»:

Բայց Աւետարանը մեզի կ'ըսէ, թէ կարելի չէ զԱստուած սիրել՝ առանց մեր նմանը սիրելու: Եթէ ես ըսեմ, թէ «Աստուած կը սիրեմ, բայց եղբայրս չեմ սիրեր». կը նշանակէ որ առ Աստուած իմ սէրս սուտ է, խօսք է միայն եւ խօսքի սահմանէն անդին չեք թար:

Ի՞նչ է թշնամին սիրելը:

Եւքի գիրքին մէջ (23.4-5) պատուէր կը տրուի, որ երբ մէկը իր թշնամիի կենդանին մոլորած գտնէ՝ թող զայն անոր դարձնէ. կամ բեռին տակ ինկած գտնելու պարագային՝ ազատէ: Այդ պատուէրը՝ թշնամիի անձին վնաս չհասցնել ալ չի՞ թելագրեր արդեօք:

Թէեւ չին Կտակարանը թշնամին սիրելու խօսք չունի, սակայն գոնէ ունի թշնամիին չարիք չհասցնելու պատուէրը: Յիսուս այդ պատուէրը կը խորացնէ:

Սիրելը զգացական զեղում մը կամ արտայայտութիւն մը չէ: Յիսուսի ակնարկած «սիրել»ը՝ նախ եւ առաջ սեփական մտածելակերպին փոփոխութիւնն է, որով դիմացինը իբրեւ մարդ կը դիտուի,

անոր «մարդկային արժանիքները» կը ճանչցուին: Եւ երկրորդ՝ բարիք կամ բարի գործ ընել է:

Թշնամին սիրելը դիւրին չէ. անիկա կրնայ մեզմէ սրտի յատուկ դաստիարակութիւն մը պահանջել: Առանց սրտի դաստիարակութեան շատ դժուար է թշնամին սիրելը:

Յիսուս ըսած է, որ իր հետեւորդներուն ամբողջ նպատակը պէտք է ըլլայ Երկնաւոր Հօր նմանիլ: Այսինքն՝ մարդոց հետ վարուիլ այնպէս՝ ինչպէս Երկնաւոր Հայրը կը վարուի:

Ուրեմն, ի՞նչ է Աստուծոյ վարմունքը մարդոց հանդէպ: Ան «իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ»: Հետեւաբար այն անձը որ կը փորձէ Երկնաւոր Հօր նմանիլ, նոյնպիսի վարմունք պէտք է ունենայ: Ահա ճիշդ այս կէտին է, որ Յիսուսի կատարեալ ըլլալու կոչը տրուած է. կատարեալ ըլլալ Երկնաւոր Հօր պէս:

Հետեւաբար, թշնամին սիրելը, անիծողը օրհնելը, ատողին բարիք ընելը եւ չարչարողին ու հալածողին համար աղօթելը կը նմանին այն վարմունքին՝ որ Աստուած կ'ունենայ չարերուն եւ մեղաւորներուն հանդէպ: Ան որ միայն բարիները եւ արդարները կը սիրէ, միայն զանոնք կ'օրհնէ, միայն բարիք կ'ընէ ատողներուն եւ կ'աղօթէ միայն անոնց համար՝ որոնք իր բարեկամներն են՝ սովորական ճամբան է, որ կը քալէ: Միւս ճամբան է սակայն՝ կատարեալ ըլլալու ճամբան...

Յիսուս ուրիշ անգամ մըն խօսած է կատարեալ ըլլալու մասին. մեծահարուստ երիտասարդին հետ հանդիպման ընթացքին: Եւ անոր ըսած է. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինձի» (Մտ 19.21):

Այս դրուագով կը յայտնուի, որ կատարեալ ըլլալու ընթացքը ամբողջական զոհողութեամբ կատարուած/կատարուող բարեգործութիւնն է:

Արդ, թշնամին սիրելը, անիծողը օրհնելը, ատողին բարիք ընելը, չարչարողին ու հալածողին համար աղօթելը՝ բարեգործ կեանքի մը գերագոյն ընթացքն են:

Առանց սրտի դաստիարակութեան շատ դժուար է թշնամին սիրելը:

Յիսուսի պատգամն է, թէ ան որ իրեն կը հետեւի՝ եթէ կամենայ՝ կրնայ թշնամի սիրել, անիծողը օրհնել, ատողին բարիք ընել եւ չարչարողին ու հալածողին համար՝ աղօթք:

**Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ
ԱՍՏՈՒԱԾԱՀՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**

Երկուշաբթի, 5 Յունուար 2009,
Երեկոյեան ժամը 5.00-ին:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Երեկոյեան ժամը 6.30-ին:
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

**ԱՐԺ. Տ. ԳԱՌՆԻԿ ԲՀՆՅ.
ԳՈՅՈՒՆԵԱՆ
(ՀՈՎԻԻ)**

**ԱՍՏՈՒԱԾԱՀՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ
ԿԸ ԿԱՏԱՐԵՆ՝**

*Խշխշեան Բաֆֆի, Ալէմեան Մանուկ,
Դաւիթեան Բաֆֆի, Մալոյեան Սասուն,
Իսրայիլեան Ալինա, Յարութիւնեան Մելիսա,
Գասպար Թալին, Իսրայիլեան Լինէթ,
Տէմիրճեան Ռուպինա, Քիւլլիւքեան Սերենա,
Տէմիրճեան Թամար, Գլընճեան Դալար,
Գոյունեան Մաշտոց, Գոյունեան Կորիւն,
Պապիկեան Արէն, Պարթեւեան Արամ, Պարթեւեան
Ճէսիքա, Պապիկեան Սեւակ:*

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

**ՏՕՆ ԾԱՆԴԵԱՆ
ԵՒ
ՅԱՅՏՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌԱ ՄԵՐՈՂ
ՅԻՄՈՒԻՒ ԲՐԻՍՏՈՒԻ**

**ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
ԱՌԱՓՕՏԵԱՆ ԺԱՄԸ 9.30**

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

**ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ
ԵՒ
ԿԸ ՊԱՏԳԱՍԷ**

**ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐՔ.
ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
(ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ)**

Երեքշաբթի, 6 Յունուար 2009
Առաւօտեան ժամը 11.00

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Չորեքշաբթի, 7 Յոհնուար 2009
ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԺԱՄԸ 11.00